



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՏՀՏ-ի դերը հանրակրթական դպրոցի դասավանդման գործընթացում

Հետազոտող ուսուցիչ՝ Գրետա Հարությունյան

Արագափի Թաթուլ Հուրյանի անվան միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Աիդա Սրապիոնյան

Բովանդակություն

| | |
|--|----|
| Ներածություն _____ | 3 |
| Գրական ակնարկ _____ | 5 |
| Հետազոտություն _____ | 9 |
| Խմբի նկարագիր _____ | 12 |
| Հետազոտության ընթացք _____ | 13 |
| Փորձարարական դաս 1. _____ | 13 |
| Փորձարարական դաս 2. _____ | 15 |
| Տվյալների մշակում և վերլուծություն _____ | 16 |
| Եզրակացություն _____ | 17 |
| Օգրագործված գրականության ցանկ _____ | 18 |
| Հավելված | |
| Դասապլան | |

Ներածություն

21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Ուսման որակի բարձրացման համար մեծ դեր ու նշանակություն ունի SՀS-ի կիրառումը: SՀS-ի կրառմամբ աշակերտը ձեռք է բերում ինչպես առարկայական գիտելիքներ, այնպես էլ կարողություններ և հմտություններ: Ժամանակակից աշակերտը ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Հանրակրթական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի: Այստեղ օգնության են գալիս համակարգիչը, համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ: Դպրոցի աշակերտին տրված արդյունքներից պիտի լինեն նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը: Նյութի մատուցումը SՀS տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:

Աշխատանքի նպատակն է վերլուծել և հիմնավորել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասերին և նրա դերը ուսուցման գործընթացում՝ աշակերտների ներգրավվածության ապահովման տեսակետից:

Աշխատանքի խնդիրների շարքում առանձնանում են հետևյալները.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրին վերաբերող հայեցակարգային մոտեցումները, մասնագիտական գրականություն, մանկավարժության ոլորտի մասնագետների և մտածողների տեսական դրույթները:
2. Ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները դպրոցում:
3. Մշակել և մանկավարժական պրակտիկայում փորձարկել դասերի նմուշ օրինակներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

4. Հարցումներ իրականացնել ուսուցիչների շրջանում՝ պարզելու համար՝ արդյունավետ էարդյոք տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասաժամերին՝ աշակերտների ներգրավվածության ապահովման տեսակետից:

Դպրոցական պրակտիկայում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմնական ուղղություններն են.

- համակարգիչը՝ որպես գիտելիքների ստուգման միջոց;
- տեխնոլոգիաները՝ որպես ցուցադրման միջոց նոր նյութը բացատրելու ընթացքում;
- անհատական համակարգիչը՝ որպես ինքնակրթության միջոց:

Տեղեկտվական նորանոր տեխնոլոգիաներով հագեցած հարափոփոխ մեր աշխարհում ուսուցիչներին ու աշակերտներին անհրաժեշտ է ճիշտ տեղեկատվություն, ճիշտ աղբյուրներից և ճիշտ ժամանակին: Հաջողության հասնելու կարևոր գրավական է անհրաժեշտ տեղեկություններն ուղղակիորեն ձեռք բերելու հնարավորությունը:

Աշակերտների առաջադիմությունը, ներգրավվածությունը դասին կարող է մեծապես շահել, երբ ուսուցման ու ուսումնառության գործընթացում տեխնոլոգիաների կիրառումը դառնա կանոն:

Գրական ակնարկ

Ըստ տեխնոլոգիայի մի ընդհանուր սահմանման, այն մի գործիք է, որն օգնում է կազմակերպել և իրականացնել կոնկրետ գործողություններ և նպատակներ: Փոփոխությունների հետ կապված իրենց նպատակներին ծառայելու համար տեխնոլոգիաները պետք է համակցված, միահյուսված լինեն տվյալ կրթօջախի ամբողջ կառուցվածքի մեջ (Чудинов И., Информационные системы и технологии, М.: 2013, էջ 15):

Տեխնոլոգիապես հագեցված դպրոցները, որոնք կիրառում են տեղեկատվական - հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) կրթական նպատակներով, նշանակալի արդյունքներ են տալիս աշակերտների համար՝ հատկապես նրանց ներգրավվածության ապահովման առումով (Թոփուզյան Ա., Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, Երևան, 2018, էջ 69):

Բարձր են լինում այդպիսի դպրոցների սաների թեմատիկ գրավոր աշխատանքների ցուցանիշները, ուսման հանդեպ նրանք ունենում են մոտիվացիա, դասավանդման գործընթացում ավելի ուշադիր են և ներգրավված:

Բազմաթիվ են ՏՀՏ-ների կիրառման դրական հետևանքների մասին վկայող ուսումնասիրությունները, ինչպիսին է, օրինակ, Հայաստանի Դպրոցների Փոխկապակցման Ծրագիրը (ՀԴՓԾ) (Հայաստանի Դպրոցների Փոխկապակցման Ծրագիր //

<https://am.usembassy.gov/hy/education-culture-hy/educational-exchange-hy/>): Դրա

շրջանակներում իրականացված հետազոտություններն ապացուցում են, որ ՏՀՏ-ների կիրառումը բարենպաստ առաջընթաց է բոլոր աշակերտների համար՝ անկախ նրանց տարիքից, սեռից, սոցիալական կարգավիճակից և այլ հատկանիշներից:

Տեխնոլոգիապես հարուստ միջավայրում աշակերտը ոչ միայն շարունակում է լավ ցուցանիշներ պահպանել ստուգողական աշխատանքներում, այլև զարգացնում է այնպիսի կարողություններ, որոնք սովորաբար չեն չափվում: Համակարգչի օգնությամբ կրկնողական վարժությունների, տեսաձայնային տարբեր ծրագրերի, տեսադիսկերի, վիդեո և աուդիո տեխնոլոգիաների և հեռուսուցման միջոցով:

Ինչպես նշում է Պ.Մամոյլենկոն, «կրթական ինտերակտիվ տեխնոլոգիաների միջոցով (համակարգչով ստեղծված իրավիճակներ, համացանց, լազերային

սկավառակներ) աշակերտները սովորում են ինչպես դասակարգել բազմակողմանի տեղեկություններ, բացահայտել միտումներ, կատարել ընդհանրացումներ, փոխանակել արդյունքները և յուրացնում են կազմակերպչական և խնդիրների լուծման հմտություններ» (Самойленко П.И. Информационные технологии в науке и образовании, М.: 1998, էջ 78):

Աշակերտներն ուսումնառական այդպիսի միջավայրում հետազոտում և տարբեր կերպերով վերարտադրում են բազմազան տեղեկություններ, իրազեկ են դառնում սոցիալական հիմնախնդիրներին: Բացի այդ, նրանք դառնում են ավելի ինքնավստահ, արդյունավետորեն են հաղորդակցվում բարդ խնդիրների դեպքում, դառնում ինքնուրույն սովորողներ և նախաձեռնողներ, լավ գիտակցում են իրենց ունակությունների բնագավառները և իրենց կարողությունները պատրաստակամորեն փոխանցում են ուրիշներին:

Որոշ քննադատներ մտահոգություն են հայտնում այն մասին, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը դպրոցում, ընդհակառակը, անբարենպաստ ազդեցություն են թողնում ուսումնական գործընթացի վրա, աշակերտներին դարձնում են առավել մեկուսացված մեկը մյուսից, պակասում է հաղորդակցությունը, կորցնում են իրենց մտքի ձկունությունը և մարդկանց հետ շփվելու կարողությունը: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս անհանգստություններն անհիմն են:

Հետևյալ կետերն ամփոփ ներկայացնում են SՆS-ների կիրառության առավելությունները և դրանց ազդեցությունը աշակերտների վրա:

- ✓ Բազմազան կերպերով աշակերտները հետազոտում և վերարտադրում են տեղեկատվությունը;
- ✓ Աշակերտներն ավելի լավ են հասկանում շրջակա պայմանները և ավելի ինքնավստահ են դառնում;
- ✓ Ավելի արդյունավետորեն են կարողանում հաղորդակցվել բարդ թեմաներով;
- ✓ Ձեռք են բերում ինքնուրույնություն;
- ✓ Գիտակցում են իրենց կարողությունների շրջանակը և պատրաստակամ են հաղորդել իրենց փորձը;
- ✓ Կարողանում են ավելի սերտ համագործակցել;
- ✓ Ապագայի նկատմամբ ձեռք են բերում ավելի դրական հեռանկարներ:

SՀS-ներն օգնում են նյութի նկատմամբ հետաքրքրություն զարգացնել, միավորել զգայական պատկերները, միջառարկայական զուգահեռները և իրական կյանքի հետ կապը, ինչպես նաև օգնում են ուսուցումը հարմարեցնել սովորողների ուսումնառության անհատական ոճերին: Այսինքն, աշակերտներին հնարավորություն է տրվում աշխատել իրենց սեփական արագությամբ և հանդես գալ սեփական նախաձեռնություններով: Ինտերնետից օգտվող աշակերտների մոտ շատ ավելի լավ են զարգացած տեղեկությունների կառավարման՝ տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, ընտրելու, հավաքելու, ուսումնասիրելու և դասակարգելու կարողությունը, ինչպես նաև հաղորդակցման ու մտքերի ներկայացման հմտությունները:

Այսպիսով, SՀS-ները աշակերտներին կապում են հարափոփոխ աշխարհին և նրա առաջադրած պահանջներին: Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ SՀS-ները զգալի, դրական ազդեցություն են ունենում կրթության վրա: Ուսումնասիրություններում ի հայտ եկած կարևոր կետերից են հետևյալը:

- SՀS-ները զգալի դրական ազդեցություն են ունեցել աշակերտի առաջադիմության վրա:
- Դրական արդյունքներ գրանցվել են առարկայական բոլոր բնագավառներում, նախադպրոցական տարիքից մինչև բարձրագույն կրթություն, ընդհանուր և հատուկ մանկավարժության ասպարեզում:
- Փորձն ապացուցում է, որ ինտերակտիվ տեսանյութը արդյունավետ է հատկապես այն ժամանակ, երբ ուսուցվող հմտություններն ու հասկացություններն ունեն տեսողական մաս:

Հաստատվել է նաև այն, որ SՀS-ները կարևոր դեր են խաղում նաև սովորելու նկատմամբ աշակերտի մոտ դրական վերաբերմունքի ձևավորման, ինչպես նաև աշակերտի ինքնահաստատման հարցում:

SՀS-ների ներմուծումը ուսումնական միջավայր ուսումը դարձրել է ավելի աշակերտակենտրոն, նպաստել է համագործակցային ուսումնառությանը և ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններին: Այսպիսով, կրթական գործունեության մեջ փոխվում է շեշտադրությունը՝ ուսուցչակենտրոնից դեպի աշակերտակենտրոն և դասավանդումից դեպի աշակերտի ինքնուրույն ճանաչողական գործունեություն

(Աստվածատուրյան Ս., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, 2004 թ., էջ 45):

Հարկ է նշել, որ ՏՀՏ-ների արդյունավետության աստիճանը կախված է աշակերտների կոնկրետ խմբից, էլեկտրոնային ծրագրերի դիզայնից, ուսուցչի դերից, աշակերտների խմբավորումից և թե որքանով են տեխնոլոգիաները մատչելի աշակերտների համար: Համակարգչով փոքր խմբերի աշխատանքն ավելի արդյունավետ կարող է լինել այն ժամանակ, երբ նրանք անցել են համագործակցության գործընթացի վերաբերյալ նախապատրաստական դասընթաց:

Փորձելով համակարգչային տեխնոլոգիաները միահյուսել դասավանդման մեջ՝ ուսուցիչները ստիպված են կրթության մասին իրենց պատկերացումները վերաքննել և ավելի ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերել աշակերտներին սովորելու նորանոր հնարավորություններ ընձեռնելու հիմնախնդրում: Փաստորեն, ՏՀՏ-ները հնարավորություն են տալիս փոխել ուսուցիչների ու աշակերտների ավանդական դերերը: Քանի որ այս տեխնոլոգիաներն ինքնին տեղեկությունների աղբյուրներ են, կարևորվում է ուսուցիչների դերը որպես խորհրդատու-ուղեցույցներ և քանի որ այս տեխնոլոգիաները վերահսկում-գնահատում են նյութի յուրացումը, աշակերտներն էլ կարող են դառնալ ակտիվ սովորողներ, ձգտեն յուրացնել այնպիսի հմտություններ, որոնք հնարավորություն կտան լուծել իրենց առջև դրված խնդիրները: Այդ խնդիրներից են՝

1. բարձրացնել սովորողի մոտիվացիան.
2. բարձրացնել ուսման գործընթացի արդյունավետությունը.
3. նպաստել ուսանողների ճանաչողական ոլորտի ակտիվացմանը.
4. կատարելագործել դասավանդման մեթոդները.
5. ժամանակին հետևել վերապատրաստման և կրթության արդյունքներին.
6. պլանավորել և կազմակերպել աշխատանքը.
7. կիրառել որպես ինքնակրթության միջոց.

Հետազոտություն

Մովորողների ճանաչողական գործունեության ակտիվացման համար շատ կարևոր է ճիշտ կազմակերպել գիտելիքի յուրացման յուրաքանչյուր փուլի՝ ընկալման, ընթանման, ընդհանրացման (հասկացությունների ձևավորումը), ամրապնդման, հմտությունների և կարողությունների ձևավորման, դրանց կիրառման, ստուգման և գնահատման (ինքնագնահատումը) գործընթացները:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հարմարեցումը մանկավարժական գործընթացներին հնարավորություն է տալիս ուսուցման ընթացքում՝ զարգացնել սովորողների մտավոր գործողությունները, դատողություններ անելու, համեմատություն և ընդհանրացում կատարելու կարողությունները՝ դրանով իսկ ապահովելով ուսուցման անհատականացումը արդյունավետ դարձնել գիտելիքների վերարտադրման գործընթացը հատուկ թեստավորման ծրագրերի, լսելու, փորձագիտական գնահատականների և այլնի օգնությամբ:

Աշակերտների իմացական գործունեության ակտիվացման համար չափազանց արդյունավետ միջոց են մուլտիմեդիա տեխնոլոգիաները: Մուլտիմեդիան ժամանակակից համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիա է, որն իր մեջ ներառում է տեքստը, ձայնը,

վիդեոտեսագրությունը, գրաֆիկական պատկերն ու անիմացիան: Այն ծրագրային միջոցների և սարքավորումների միջոցով տեղեկատվության ապահովում է, ինչը թույլ է տալիս մարդուն ընկալել այդ տեղեկատվությունը մի քանի զգայարանների միջոցով:

Ուսուցման արդյունավետ մեթոդներից է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ անցկացվող դիդակտիկական խաղը: Այն օգնում է աշակերտներին՝ ձևավորել այնպիսի հասկանիշներ, ինչպիսիք են ինքնաճանաչումը, ինքնավերահսկողությունն ու ինքնակարգավորումը: Որոշ խաղեր՝ կառուցված լինելով տարբեր աստիճանի դժվարության մակարդակով, հնարավորություն են տալիս տարբերակված աշխատանք կազմակերպել դասարանում, անհատական մոտեցում ցուցաբերել մտավոր զարգացման տարբեր մակարդակ ունեցող երեխաների նկատմամբ: Խաղը, որպես կանոն, պետք է լինի դինամիկ, ունենա որոշակի նպատակ: Խաղն անցկացնող մանկավարժը պետք է տիրապետի խաղի վարման մեթոդիկային:

կարողանա ճիշտ ընտրել խաղն ու համապատասխանեցնել այն ուսուցման նպատակին, հաշվի առնի այն հանգամանքը, որ դասի ընթացքում կիրառվող խաղային տարրերը կարող են նպաստել սովորողի իմացական գործունեության զարգացմանը և ակտիվացմանը, եթե

անմիջականորեն բխեն դասի թեմայից, նրա խնդիրներից, ազդեն երեխաների զգացմունքների վրա և միայն զվարճացնող բնույթ չկրեն: Գիտակցի, որ խաղի միջոցով ձևավորվում են սովորողի համագործակցային կարողությունները, ներքին ազատության և ընկերական աջակցության զգացողությունը: Դրանք մտերմացնում են խաղի մասնակիցներին, խորացնում նրանց փոխհարաբերությունները, նպաստում բարենպաստ դասարանական մթնոլորտի բարելավմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դիդակտիկական խաղերը նպաստում են նաև մանկավարժական համատեղելիության հաստատմանը՝ քանի որ ուժեղացնում են մանկավարժական ազդեցության ուժը, հարստացնում են երեխայի՝ մեծերի հետ շփման սոցիալական փորձը և ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը: Խաղի կանոններին ենթարկվելը աշակերտի մեջ ձևավորում են գիտակցված ենթարկվածություն, որը ոչ միայն չի վիրավորում նրա արժանապատվությունը, այլ ավելին՝ նպաստում է նրա ինքնակարգավորման մեխանիզմների ձևավորմանն ու վարքի կարգավորմանը Մոյն աշխատանքի համատեքստում մեր կողմից իրականացվել է հետազոտություն՝ պարզելու, թե ինչպես է իրականացվում դասապրոցեսը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ և որքանով է այն արդյունավետ:

Այսպիսով, անդրադառնալով տվյալ հետազոտական աշխատանքի բուն ընթացքին, ներկայացնենք դրան վերաբերող հիմնական դրույթները:

Հետազոտական աշխատանքի նպատակն էր պարզել, թե ՏՀՏ միջոցները որքանով են նպաստում դասի ժամանակ աշակերտների ներգրավվածության ապահովմանը:

Ելնելով առաջադրված նպատակից, հետազոտության ընթացքում առաջնորդվել ենք հետևյալ խնդիրների պարզաբանմամբ.

- Դիտարկել աշակերտների ներգրավվածության մակարդակի փոփոխությունները՝ կախված ՏՀՏ միջոցների կիրառությունից;
- Անցկացնել փորձնական դասեր՝ կիրառելով ՏՀՏ միջոցներ դասանյութի մատուցման ընթացքում;
- Աշակերտներին առաջադրել դասի ավարտին անցնել տրված հղումով և լրացնել ելքի քարտը, որը կազմված է google forms-ով՝ ՏՀՏ միջոցների կիրառմամբ:
- Թեմայի շրջանակներում անցկացնել հարցազրույց դպրոցի ուսուցիչների շրջանում, պարզելու համար, թե որքանով են կիրառում ՏՀ-ը դասապրոցեսի ընթացքում:


Ելնելով առաջադրված նպատակից, ձևակերպում եմ հետազոտության հիմնական վարկածը հետևյալ կերպ. SՏՏ միջոցների կիրառության օգնությամբ հնարավոր կլինի զգալիորեն բարձրացնել աշակերտների ներգրավվածությունը դասին:

Դասարանը այս պարագայում հանդես է գալիս, որպես հետազոտության օբյեկտ: Հարկ է նշել նաև, որ փորձարկումն իրականացվել է բնական միջավայրում, անմիջականորեն դասի ընթացքում, իսկ ուսումնասիրության է ենթարկվել մեկ դասարանը: Այդ իսկ պատճառով հետազոտությունը բնութագրվում է, որպես բնական, գծային հետազոտություն:


Ուսուցիչը անմիջականորեն մասնակցել է իրականացվող գործընթացին, ներգրավված լինելով հետազոտության մեջ, որպես դիտարկող: Ընդ որում, դիտարկումը կրել է կրկնվող բնույթ, քանի որ անցկացվել է 2 փորձնական հետազոտական դաս՝ հստակ առաջադրված նպատակներով և կիրառված համապատասխան նյութերով և SՏՏ միջոցներով:

Տվյալների հավաքագրման մեթոդներն են հանդիսացել դիտարկումը, անկետավորումը, հարցաթերթիկները: Ուսուցիչներին կատարվեց հետևյալ հարցադրումները.

1. Դասապրոցեսի ընթացքում կիրառում եք տեղեկատվական տեխնոլոգիաներ:



2. Դասապրոցեսի ո՞ր փուլում եք կիրառում տեղեկատվական տեխնոլոգիաները:



Խմբի նկարագիր

Հետազոտությունս անցկացրել եմ Արմավիրի մարզի Արագածի գյուղի դպրոցում՝ 8-րդ դասարանում: Դասարանում սովորում են 15 աշակերտ, որոնցից 6-ը աղջիկ են՝ 9-ը տղա:

Լավ են սովորում 8 աշակերտ, ունենք միջին մակարդակի սովորող 4 աշակերտ, իսկ թույլ սովորող 3 աշակերտ:

Հետազոտության ընթացք

Փորձարարական դաս 1

Հետազոտական դասերն անցկացվել են VIII դասարանի աշակերտների հետ, որտեղ սովորում են 15 աշակերտ: Առաջին դասին նրանց առաջարկվել է ծանոթանալ նոր ուսումնական թեմայի հետ, որից հետո խմբային աշխատանքի միջոցով ներկայացրել են միմյանց նյութը, այնուհետև լուծել են խնդիրներ թեմայի շուրջ: Դասի նպատակն էր զարգացնել խնդիր լուծելու, միմյանց հետ համագործակցելու, գիտելիքները ամրապնդելու այս թեմայի շուրջ: Բացի դա, դասի ընթացքում առաջադրվել են նաև այլ նպատակներ, մասնավորապես.

- Նպաստել աշակերտների՝ ազատ և անկաշկանդ հաղորդակցմանը միմյանց հետ;
- Խթանել աշակերտների ինքնագնահատականի և ինքնավստահության բարձրացմանը դասի ընթացքում:

Դասի ընթացքում նկատվում էր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին, այսինքն մի քանի աշակերտներ բավականաչափ մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում ուսումնասիրվող թեմայի շուրջ, այլ աշակերտները՝ չէին տարբերվում զգալի մեծ ներգրավվածությամբ: Հետազոտող ուսուցիչը օժանդակող հարցերի միջոցով, քննարկումներ կազմակերպելու օգնությամբ փորձեց բարձրացնել աշակերտների ակտիվությունը դասի ժամանակ, նրանց մոտ ներգրավվածություն խթանել: Այս ընթացքում շեշտադրվում էր աշակերտների՝ միմյանց հետ համագործակցելու կարողության զարգացումը:

Ընդհանուր, ամփոփելով առաջին դասի արդյունքները, կարող ենք նշել. 15 աշակերտներից 4-ը բավականաչափ ակտիվ էին դասի ժամանակ և մասնակցում էին թե քննարկումներին, թե ուսուցչի կողմից առաջադրված հարցադրումներին, 6-ը փորձում էին մասնակցություն ցուցաբերել և ուսուցչի՝ իրենց ուղղված հարցադրումներից հետո, փորձում էին պատասխանել դրանց, սակայն նրանց ակտիվությունը զգալիորեն ցածր էր: Եվ 5 աշակերտ գրեթե չէին մասնակցում դասապրոցեսին:

Հաջորդ դասի համար աշակերտներին հետաքրքրելու և նրանց ակտիվացնելու համար հանձնարարվեց համակարգչի միջոցով սահիկ պատրաստել ազատ անկման թեմայի վերաբերյալ:

Փորձարարական դաս 2

Երկրորդ դասի ժամանակ աշակերտները պատրաստել էին բավականին հետաքրքիր սահիկ՝ նկարերով, օրինակներով, տեսական մասով: Աշակերտները աշխատել էին միասին, յուրաքանչյուրը որոշակի աշխատանք էր կատարել: Աշակերտները միմյանց հետ հաղորդակցվելով և պայմանավորվելով, որպեսզի բոլորը նույն սահիկը չպատրաստեին: Յուրաքանչյուր աշակերտ հետաքրքրություն դրսևորեց աշխատանքի նկատմամբ, քանի որ գրեթե բոլոր աշակերտները լավ էին պատրաստվել, իրենց պատասխանատու զգալով ընդհանուր դասարանի լավ աշխատանքի համար:

Կարելի է փաստեր, որ աշակերտների համատեղ ուսումնական գործունեությունը հաջողվել էր և հասել իր նպատակին՝ ապահովել բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Դրան էր նպաստել նաև համակարգչի կիրառությունը տնային հանձնարարության կատարման ժամանակ: Շարունակելով առաջին դասին սերտված ռազմավարությունը՝ երկրորդ հետազոտական դասի ընթացքում աշակերտները շարունակեցին S2S միջոցների կիրառմամբ իրենց դասը:

Դասի ավարտին աշակերտների գիտելիքների և հմտությունների յուրացման մակարդակը պարզելու համար նրանց առաջարկվեց հայտորոշիչ թեստ, որի արդյունքներով հնարավոր եղավ հասկանալ նաև յուրաքանչյուր աշակերտի ներգրավվածության մակարդակը, ինչպես նաև դրա փոփոխությունը նախորդ դասի համեմատ:

Ընդհանուր, 15 աշակերտներից և ոչ ոք առանց մասնակցության չմնաց, այսինքն չկար այնպիսի աշակերտ, որ առաջադրանքը կատարած և այն ներկայացրած չլիներ:

Յուրաքանչյուր աշակերտ իր ստեղծագործական մտքի չափով պատրաստել էր բավականին հետաքրքիր քարտ և մատուցել դրա բովանդակությունը դասի ժամանակ: Աշակերտները բավականին ոգևորված էին նաև նախորդ դասի հետ համեմատած, քանի որ նրանց բավականաչափ հետաքրքրել էր աշխատանքը համացանցի միջոցով:

Տվյալների մշակում և վերլուծություն

Զգալիորեն աճեց նաև դասարանի պատկերը՝ աշակերտների ընդհանուր ներգրավվածության առումով: 15 աշակերտներից 6-ը բավականաչափ ակտիվ էին մասնակցում դասին, վստահ և կայուն կերպով ներկայացնում էին տնային հանձնարարությունը և մասնակցություն էին ցուցաբերում ընդհանուր քննարկումներին, կիսվում իրենց կարծիքով և

տպավորություններով: Մյուս 9-ը նույնպես փորձում էին ներգրավվել դասի մեջ և ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, որը բավականաչափ հետաքրքրել էր իրենց:

Համեմատելով առաջին և երկրորդ հետազոտական դասերի ընթացքում արձանագրած պատկերը, պարզ երևում է, որ ՏՀՏ միջոցների կիրառումը, համագործակցային մթնոլորտի ստեղծումը դասի ընթացքում, ինչպես նաև ստեղծագործական մոտեցում պահանջող առաջադրանքի հանձնարարումը զգալիորեն նպաստեցին աշակերտների ակտիվության և ներգրավվածության աճին: Գրեթե ոչ մի աշակերտ անմասն չմնաց դասից, յուրաքանչյուրը աշխատանք էին կատարել և ներկայացրեցին այն ամենայն պատասխանատվությամբ: Այսպիսով, կիրառելով ՏՀՏ միջոցները, դրանք համադրելով համագործակցային մթնոլորտի ապահովման հետ, հնարավոր եղավ հասնել հետազոտական սկզբնական փուլում առաջադրված նպատակին՝ նպաստել աշակերտների ներգրավվածության խթանմանը:

Եզրակացություններ

Աշխատանքի ուսումնասիրության և հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

SՀS կիրառումը դպրոցում աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում: SՀS-ի կիրառումը դպրոցում հանգեցնում է բացատրողական-նկարագարող մատուցման փոխարինմանը՝ կիրառականով: Աշակերտը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը SՀS տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:

Իհարկե, տեղեկատվական տեխնոլոգիաները երբեք չեն փոխարինել ու չեն փոխարինի ուսուցիչներին: Սակայն ուսուցիչները, ովքեր իրենց դասապրոցեսում կիրառում են տեխնոլոգիաները և ավելի նորարար են, հավանաբար կփոխարինեն այն ուսուցիչներին, ովքեր չեն կիրառում դրանք:

Այսպիսով, դպրոցում ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ակտիվացնելու սովորողների ճանաչողական և մտավոր գործունեությունը:

Մենք գիտենք, որ SՀS համարվում են արդյունավետ ձև դասագործընթացում, և դա փաստել են մեր հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը:

Մուլտիմեդիա ներկայացումները թույլ են տալիս ներկայացնել ուսումնական նյութը որպես պայծառ տեղեկատու պատկերների համակարգ: Այս դեպքում ներգրավված են ընկալման տարբեր ալիքներ, ինչը հնարավորություն է տալիս տեղեկատվություն դնել ոչ միայն փաստացի, այլև ասոցիատիվ ձևով:

Տեղեկատվական տեխնոլոգիաները օգնում են երեխաներին դառնալ ավելի ակտիվ և անկախ աշակերտներ, թույլ են տալիս սովորել միմյանցից և օգտվել տեղեկատվության ամենալայն շրջանակից:

Գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, 2004
2. Թովուզյան Ա., Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, Երևան, 2018
3. Հայաստանի Դպրոցների Փոխկապակցման Ծրագիր // <https://am.usembassy.gov/hy/education-culture-hy/educational-exchange-hy/>
4. Самойленко П.И. Информационные технологии в науке и образовании, М.: 1998
5. Чудинов И., Информационные системы и технологии, М.: 2013


ՀԱՎԵԼ ՎԱԾ

Դասապլան

Ուսուցիչ՝ Գրետա Հարությունյան

| | |
|---|---|
| Առարկան | Ֆիզիկա |
| Դասարան | 8 |
| Թեմա | Ազատ անկման արագացման որոշումը |
| Նպատակը | 1.Սովորողների մեջ գիտելիքներ ձևավորել ազատ անկման մասին, այդ շարժման բնույթի մասին, ազատ անկման առանձնահատկությունների մասին 2. Նպաստել սովորողների ճանաչողական, վերլուծական, եզրակացություններ անելու կարողությունների զարգացմանը: 3. Նպաստել միջանձնային հաղորդակցության մշակույթի ձևավորմանը խմբային աշխատանքի կազմակերպման միջոցով: |
| Վերջնարդյունքները | Արդյունքում սովորողը պետք է կարողանա՝ 1.Սահմանել ազատ անկումը: 2.Ներկայացնել ազատ անկման արագացման միավորը և նրա ֆիզիկական իմաստը: 3.Հաշվարկել ազատ անկման արագացումը, ուղղաձիգ դեպի վեր և ներքև նետված մարմնի շարժման արագությունները, անցած ճանապարհը: |
| Միջառարկայական կապերը: | Հայոց լեզու - Կարողանա հասկանալ կարդացածը, ներկայացնել լսարանին, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Հանրահաշիվ - Կարողանա կատարել գործողություններ տառային արտահայտություններով կոտորակների հետ, կատարել չափման միավորների ձևափոխություններ: |
| Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ: | Դասագիրք <<Ֆիզիկա 8>>, համակարգիչ, պաստառ, կաշուն թղթեր |
| Ուսուցման մեթոդներ: | Զրույց, մտազրոհ, ցուցադրում, դիտում, աշխատանք դասագրքով, աշխատանք քարտերով, խնդիրների լուծում: |
| Կապը հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հետ | Հ-4, Հ-6, Հ- 7, Հ- 8, Հ- 9, Հ- 12, Հ- 28, Հ-29, Հ-30, Հ- 31 |

Դասի ընթացքը

| | |
|-----------------------------------|---|
| <p>Դասի սկիզբ /5ր/</p> | <p>Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույնից և բացականների ամրագրումից հետո ուսուցիչը ցուցադրում է նկար՝</p>  <p>Որից հետո կատարում հարցադրում, թե ինչ կապ ունի նկարը այսօրվա մեր դասի հետ: Ուսուցիչը լսելով տարբեր պատասխաններ կանգ է առնում և ներկայացնում թեման և ակնկալվող վերջնարդյունքները:</p> |
| <p>Նոր նյութ/10/</p> | <p>Ուսուցիչը հրահանգում է դիտել տեսանյութը՝ https://sovorir.am/site/lesson/id/2358 : Տեսանյութը դիտելուց հետո ընկալման ստուգման նպատակով ուսուցիչը կատարում է հետևյալ հարցադրումները.</p> <ol style="list-style-type: none"> 1.Որ շարժումն են անվանում ազատ անկում: 2.Ձևակերպեք Գալիլեյի օրենքը: 3.Գրեք ազատ անկման արագացման բանաձևը: |
| <p>Գործնական աշխատանք /15ր/</p> | <p>Ուսուցիչը հրահանգում է 1-3 հաշվով բաժանվել երեք խմբի: Յուրաքանչյուր խմբի տրվում է մեկ համակարգիչ և հրահանգում անցնել հետևյալ հղումով՝ https://www.imdproc.am/p/fizika/8-dasaran/kinematika-12283/azat-ankum-azat-ankman-aragacum-12288 :Խմբերում աշխատում են միմյանց հետ քննարկելով և գրանցում յուրաքանչյուր ճիշտ պատասխանը:Ուսուցիչը շրջում է խմբերով և ուղղորդում: Առաջադրանքը կատարելու համար ունեն 10 րոպե ժամանակ:Ժամանակից շուտ վերջացնելու դեպքում լուռ նստում են մինչև մյուս խմբերի ավարտելը:Խմբերը ճիշտ պատասխանների միավորները գրում են գրատախտակին և հաշվում միավորների քանակը: Հրահանգի ընկալման ստուգման նպատակով ուսուցիչը կատարում է հարցադրումներ.</p> <ol style="list-style-type: none"> 1.Ինչ աշխատանք էք կատարում: 2.Որքան ժամանակ ունեք աշխատանքը կատարելու համար: 3.Ինչ էք անում, երբ աշխատանքն ավարտում էք նշված ժամանակից շուտ: |
| <p>Ինքնուրույն աշխատանք /10ր/</p> | <p>Ուսուցիչը բաժանում է անհատական աշխատանքները և հրահանգում չսկսել քանի դեռ չի հնչել սկսել հրահանգը:<Սկսեցինք> հրահանքը լսելուց հետո բացում ենք առաջադրանքը և ինքնուրույն կատարում: Աշխատանքի համար տրվում է 10 րոպե ժամանակ: <Ավարտ> լսելուց հետո գրիչները դնում ենք սեղանին: Հրահանգի ընկալման նպատակով ուսուցիչը աշակերտներին հարցնում է.</p> <ol style="list-style-type: none"> 1. 1.Ի՞նչ աշխատանք են կատարելու: |

2.Ինչպե՞ս են աշխատելու:

3.Երբ են ավարտում:

Քառաբաժան

| Դիտում | Վարկած |
|--------|-----------------|
| | |
| Փորձ | Օրինաչափություն |
| | |

Դասի ավարտ /5ր/

Նախապես բաժանված թերթիկների վրա ուսուցիչը հրահանգում է գրել մեկ բան, որ կհիշեն այս դասից 10 տարի անց:

Կատարում է գնահատում և հանձնարարում տնային աշխատանք:

Տնային աշխատանք՝ 8-րդ դասարան դասագիրք էջ 16 առ. 8





